# ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
«Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» 220 կՎ օդային գծի բոլոր հինգ հատվածներիի համար ՎԳՊ-ի պատրաստման և իրականացման վերաբերյալ համապատասխանության հաշվետվության պատրաստում

Հայաստանի Հանրապետություն
Էլեկտրամատակարարման Հուսալիության Ծրագիր
Վարկ No 8055-AM
Խորհրդատվական ծառայություն, Խորհրդատուի որակավորման վրա ընտրություն (ԽՈՀԸ)
Կոդը No HV-CS-3/2013
Ծրագրի No P116748
Հետաքրքրության Հայտ

Սույն Հետաքրքրության Հայտ Ներկայացնելու Հրավերը հետևում է այս ծրագրի Գնումների Ընդհանուր Ծանուցմանը, որը տպագրվել է UN Development Business-ի էլ.կայքում, 2011թ.-ի ապրիլի 12-ին:
Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային Բանկից (ՎԶՄԲ) ստացել է վարկ «Էլեկտրամատակարարման հուսալիության» ծրագիրը ֆինանսավորելու նպատակով և նախատեսվում է գումարների մի մասն օգտագործել «Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» 220 կՎ օդային գծի բոլոր հինգ հատվածներիի համար Վերաբնակեցման Գործողությունների Պլանի (ՎԳՊ) պատրաստման և իրականացման վերաբերյալ համապատասխանության հաշվետվության պատրաստման նպատակով:
Համապատասխանության ուսումնասիրությունը պետք է ներառի.

ա) Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների և անձանց քանակի ստուգումը.

բ) Արձանագրություններում նկարագված և փաստացի ազդեցությունների համապատասխանության ստուգում

գ) Համաձայնագրերում և պայմանագրերում օգտագործված փոխհատուցման միավորի համապատասխանության ստուգում ՎԳՊ-ի դրույթներին

դ) Ազդեցության ենթարկված բոլոր տնային տնտեսությունների կողմից պայմանագրերում և համաձայնագրերում ներկայացված փոխհատուցման գումարների ստացման ստուգում,

ե) Փոխհատուցման գործընթացի իրականացման/ծախսված ժամանակահատվածի ուսումնասիրություն, հաշվի առնելով ՎԳՊ դրույթները և արդյունավետության պարամետրերը:

զ) Բողոքարկման դեպքերի ուսումնասիրություն (բողոքարկման արդյունքի համապատասխանությունը ՎԳՊ-ի դրույթներին, ազդեցության ենթարկված անձի բավարարվածությունը և այլն):

է) Ազդեցության ենթարկված անձանց իրենց ընձեռնված իրավունքից և վերաբնակեցման գործընթացից բավարարվածության գնահատում:

ը ) Հողերի ձեռք բերման դեպքերի իրականացման և վերջնականացման գնահատում:

թ) Հանրային լսումների անցկացման և տեղեկատվության հանրայնացման գնահատում:

ժ) Խիստ տուժած, խոցելի և վերաբնակեցված անձանց դրամական հատկացումների գնահատում:

ի) Ինստիտուցիոնալ միջոցառումների և ծրագրի կառավարման գնահատում:

լ) Բացակայողների գնահատումը, հնարավորության դեպքում՝ նրանց քանակը, ներկայիս գտնվելու վայրը, եթե հայտնի է, և այլն:

Սույնով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնելու ծառայությունների տրամադրման համար հետաքրքրության հայտ: Հետաքրքրված

խորհրդատուները պետք է ներկայացնեն համապատասխան որակավորումը հավաստող տեղեկատվությունը (ընկերության մասին գրքույկներ, վերջին տաս տարիների ընթացքում Միջազգային Ֆինանսական Ինստիտուտների (ՄՖԻ) կողմից ֆինանսավորվող ծրագրերի ներքո կատարված նմանատիպ աշխատանքների նկարագրությունը, նմանատիպ պայմաններում աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն):

Կարճ ցանկի կազմման չափանիշներն են՝

- Վերջին տաս տարիների ընթացքում կազմակերպության փորձը Միջազգային ֆինասական ինստիտուտների կողմից ֆինանսավորվող ծրագրերում (նախընտրելի է Համաշխարհային բանկ կամ Ասիական Զարգացման Բանկ) Վերաբնակեցման Գործողությունների Պլանի (ՎԳՊ) պատրաստման և իրականացման վերաբերյալ համապատասխանության հաշվետվության պատրաստման գործում /առավելագույնը 70 միավոր/
- Վերջին տասը տարիների ընթացքում կազմակերության տարածաշրջանային փորձը Միջազգային ֆինասական ինստիտուտների կողմից ֆինանսավորվող ծրագրերում (նախընտրելի է Համաշխարհային բանկ կամ Ասիական Զարգացման Բանկ) Վերաբնակեցման Գործողությունների Պլանի (ՎԳՊ) պատրաստման և իրականացման վերաբերյալ համապատասխանության հաշվետվության պատրաստման գործում /առավելագույնը 30 միավոր /

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ուշադրություն դարձնեն Համաշխարհային Բանկի կողմից 2011թ. հունվարին (վերանայված հուլիս 2014թ.) հրապարակված «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցի 1.9 կետին, որտեղ ներկայացված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային Բանկի քաղաքականությունը:

Խորհրդատուները իրենց որակավորումը բարելավելու նպատակով կարող են միավորվել այլ ընկերությունների հետ Համատեղ Ձեռնարկության կամ ենթախորհրդատվության ձևով:

Խորհրդատուն ընտրվելու է Համաշխարհային Բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակված (վերանայված հուլիս 2014) «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին ժամը 09.00-17.30: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2014թ. դեկտեմբերի 5, ժամը 15.00:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան,Զորավար Անդրանիկի 1,
Գլխավոր տնօրեն պարոն Արամ Անանյան
Հեռ: +37410-720010; Ֆաքս: +37410-720121; էլ.հասցե: hvenprojects@gmail.com;